



Ե Ս Ս Ի Ր Ե Ց Ի

Սիրեցի քեզ, աշխարհ, յաւիտենա-
կան կեանքի հոյակապ ապացոյց: Որքան
հրաշալի ես և անոյշ, և ինչպիսի՜ կար-
գապահութեամբ կը շարունակես գոյու-
թիւնդ: Ինչպէ՞ս ծնրադիր չողօթիմ Ա-
րարչին՝ հոգւոյս փրկութեան համար:

Սիրեցի կեանքը որ քեզմէ կը բղխի,
գարունդ երբ կու գայ, ծառերդ որ կա-
նաչ կը բացուին հարսերու նման և իրենց
տերեւները կ'օրօրեն անոյշ հովուին: Կը
խորհիմ թէ մենք ալ անշուշտ պիտի
բացուինք և նորոգուինք երբ մեր ձմե-
ռէն վերջ մեր գարունը գայ:

Սիրեցի վայրի և անուշահոտ ծաղիկ-
ներդ, որ բարկութիւն չեն գիտեր և մեր
հաճոյքին համար միայն կ'ապրին:

Սիրեցի թռչնիկները երկնից, որ
ամէն առաւու արշալոյսը կ'աւետեն մեզի:
Սիրեցի երկնակամարդ, իր մարգարիտ
աստղերով. արեւդ, որ մեզ կեանք կու
տայ: Սիրեցի փայլակները և որոտումնե-
րը, և աղօթեցի որ երկնային զօրու-
թիւնները չբարկանան մեզի:

Սիրեցի լեռներդ և ձորերդ. լեռ-
ներդ որ մեզ կը մօտեցնեն Աստուծոյ,
ձորերդ որ մեզ խոնարհութիւն կը սոր-
վեցնեն:

Սիրեցի գետերդ և ծովերդ, գետե-
րուդ անոյշ ջուրերը, ծովերուդ կատաղի
ալիքները:

Ամէն տեղ կեանք տեսայ ու կը շա-
րունակեմ տեսնել: Աշխարհի մէջ մահ
չկայ: Թող չտեսնանք գերեզմանէն, որ
մեզ նոր կեանքի կը տանի:

Սիրեցի կեանքը իր բոլոր ձևերուն
մէջ. կեանքը հզոր և փոքր կենդանիե-
րու. կեանքը բոյսերու, գետերու և ծա-
ռերու. կեանքը երբեմն խաղաղ ու երբեմն
ալիքոծ ծովերու. կեանքը լեռներու և
հովիտներու. կեանքը արեւուն, լուսնին

Ա Ն Կ Ա Պ Խ Ո Շ Ե Ր

Երբեմն, բեկումի ու ծայրայիղ յու-
սալքման րոպէներուն, մտքիս լուսանց-
քին վրայ կու գայ ուրուանալ գաղա-
փարը անձնասպանութեան:

Բայց չ'ուշանոր պահը երբ կը յաջո-
ղիմ դուրս շարեւէլ գայն մտածողութեան
պարունակէն, երբ կը մտաբերեմ անհուն
կարունակը սէրերուս, որոնք, ամմոր ու
անաղօտ, կը տողանցեն մտքիս առջեւէն,
իւրաքանչիւրը ջանալով քիչ մը աւելի
ամուր կապել զիս այս կեանքին ու իր
ունայնութիւններուն:

Վասնզի անձնասպան կ'ըլլան անոնք
միայն՝ որոնք կորուսած են ամէն յոյս:
Ու սէրը աղբիւրն է յոյսի: Սիրող ան-
հատն չի կրնար խոյս տալ յոյսը: Ու,
փոխադարձաբար, յուսալից անհատի մը
սիրտը վառարան է սիրոյ:

Մէկ չէ սիրոյս առարկան բարեալա-
տաբար: Ու մակերեսային, ծանծաղ չնն
իմ սէրերը, ինչպէս չեն եղած երբեք
անցնալին: Բոքք ու անշէջ եղած են ա-
նոնք, ի՞նչ փոյթ թէ երբեմն սիրտս այ-
րելու սպառնալիքով ալ սպառաղէն:

Կը սիրեմ մայր բնութիւնը, ու իր
անդորր ծոցին մէջ անցընելիք մէկ ժա-
մուն հաճոյքը չեմ փոխեր բարեկամի մը
ներկայութեամբ անցուած ժամու մը վա-
յելքին հետ:

Կը սիրեմ չորս եղանակները տար-
ւոյն: Գարունը՝ իր կանաչութեան, իր
յորդառատ կենսունակութեան, վարդե-
րուն ու ծաղիկներուն, ու նաեւ իր խա-
ղաղ ու մերթ խենթ անձրևներուն ալ
համար: Ամառը՝ իր բաղձաղդի պտուղնե-
րուն ու պտոյտներուն ալ համար: Իր
երկնքին պայծառութեան ու լոյսին առա-

ւ աստղերուն. կեանքը որ շարունակ
կեանք կը ծնի:

Սիրեցի ես քեզ, կեանք յաւիտենա-
կան:

Կ. ՄԻՀՐԱՆԵԱՆ